ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀԸԳՀ-ի 52-րդ հոդվածի «a» և «b» կետերի, 54-րդ հոդվածի «b», «c», «d», «e» և «f» կետերի մշտադիտարկում)» զեկույցում տեղ գտած որոշ վիճակագրական տվյալների շուրջ

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը» ծրագրի շրջանակում իրականացվել է մշտադիտարկում, որն անդրադարձ է կատարել ՀԸԳՀ-ի 52-րդ հոդվածի «a» և «b», 54-րդ հոդվածի «b», «c», «d», «e» և «f» կետերին: Մշտադիտարկման զեկույցը, ինչպես նաև դրա հիման վրա պատրաստված քաղաքականության և ջատագովության համառոտագրերը հայերեն և անգլերեն լեզուներով հասանելի են www.cepacso.am կայքում:

2025 թ. հուլիսի 4-ին Զեկույցը քննարկվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում: Հիմնական քննարկման առարկա է դարձել Զեկույցում ներկայացված անտառային ոլորտը: Մասնավորապես, Զեկույցում նշված է. «1993 թվականի անտառային պետական ֆոնդի հաշվառումից երեսուն տարի անց ***անտառային հողերը*** կրճատվել են 126.200 հեկտարով: Միայն 2021-2023 թվականների ընթացքում դրանք նվազել են 200 հեկտարով: 1993 թվականի հաշվառումից երեսուն տարի անց ***անտառածածկ տարածքները*** նվազել են 45.000 հեկտարով»: Տվյալները նշված են՝ հղում կատարելով ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած Հայաստանի վիճակագրական տարեգրքերին[1] և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքին,[2] որում հրապարակված են ՀՀ անտառի ազգային ծրագրում հրապարակված անտառի վերաբերյալ ելակետային տվյալները[3]: Նախարարության աշխատակիցները և այլ փորձագետներ վիճահարույց համարեցին այս եզրակացությունը: Հաջորդած նամակագրությամբ Շրջակա միջավայրի նախարարությունը դիմել էր Զեկույցի հեղինակին՝ խնդրելով վերանայել տվյալները, մասնավորապես.*«Խնդրում եմ ապահովել վերոնշյալ փաստաթղթերի շտկումը՝ հաշվի առնելով, որ վերլուծությունն իրականացվել է ոչ համադրելի տվյալներով: Միաժամանակ ստորև ներկայացվում է միջազգայնորեն ընդունված մեթոդաբանություններից հղումներ: OECD – Data and Metadata Reporting and Presentation Handbook Հստակ նշվում է, որ ժամանակային շարքերում օգտագործվող տվյալները պետք է լինեն մեկ աղբյուրից՝ նույն սահմանումներով և չափման մեթոդներով»:*

Փորձագետը պատասխանել է այս նամակին՝ նշելով. *«Անտառածածկ հողերի վերաբերյալ նշենք, որ, եթե անգամ հաշվի առնելով Ձեր առաջարկած մեթոդաբանությունը, օգտվենք Վիճակագրական կոմիտեի տվյալներից, ապա 1993-1994 թթ. տարեգրքում անտառածածկ տարածքների թիվը նշված է 334.1 հազար հա,*

[1] https://armstat.am/am/?nid=586
[2] http://env.am/shrjaka-mijavayr/yndhanur-texekutyunner-antar
[3] https://www.arlis.am/hy/acts/14277

2024 թ. տարեգրքում անտառային տարածքը նշված է 289.1 հազար հա, ***ինչի տարբերությունը կազմում է 45 000 հա, նույն թիվը, ինչ գրված է Զեկույցում»:***

Փորձագետը նաև անդրադարձ է կատարել Շրջակա միջավայրի նախարարության կողմից մատնանշած մեթոդաբանության կիրառելիության հարցին. *«Ինչ վերաբերում է Ձեր մատնանշած մեթոդաբանությանը, հարկ ենք համարում նշել, որ Ձեր կողմից հղված Eurostat – Methodological Manuals (esp. for environmental and economic statistics մեթոդաբանությունը գործում է 2011 թ-ից հետո, ինչը ենթադրում է, որ ՀՀ անտառային հողերի և անտառածածկի ելակետային 1993 թ. տվյալներն այս մեթոդաբանությամբ չեն հաշվարկվել»:*

Ի հավելումն, տարակարծությունից խուսափելու համար, նախարարությանն առաջարկվել է, որպես անտառային ոլորտի լիազոր մարմին, տրամադրել ՀՀ անտառային հողերի և անտառածածկ տարածքների մակերեսների վերաբերյալ ինչպես 1993 թ-ի, այնպես էլ 2023 թ., նախընտրելի է նաև 2024 թ. պաշտոնական տվյալները: Սա կարող է հանդիսանալ հիմնավորում՝ Զեկույցում շտկումներ կատարելու համար:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արա Մկրտչյանը տրամադրել է տեղեկատվություն՝ նշելով. *«ՀՀ անտառածածկ տարածքները 1993 թ. կազմել են 334,100.0 հա՝ ըստ «Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագիրը հաստատելու մասին» կառավարության 2005 թ. հուլիսի 21-ի N1232-Ն որոշման: Ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝ անտառածածկը 2023 թ. կազմել է 282,633.50 հա, իսկ 2024 թ.՝ 286,474.90 հա»:* Միաժամանակ առաջարկվել է. «*անտառային հողերի մասին վերլուծությունը հանել զեկույցից՝ հաշվի առնելով, որ վերոնշյալի մասով համադրելի տեղեկատվություն առկա չէ և «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» և «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» Կառավարության որոշումներով ամրագրված են պարտավորություններ հանրապետության անտառածածկ տարածքների ավելացման մասով»:*

Ըստ փորձագետների՝ Նախարարության կողմից անտառային հողերի տվյալների չտրամադրման պատճառաբանությունն ընդունելի չէ, քանի որ Վիճակագրական

կոմիտեն իր տարեգրքերում ներկայացնում է անտառային հողերի մակերեսների վերաբերյալ տվյալներ[4], որոնցից էլ օգտվել են փորձագետները:

Նախարարության վկայակոչած՝ «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050թ.) հաստատելու մասին» փաստաթղթերում անտառածածկ տարածքների բացարձակ արժեքներ են ներկայացված, և բացակայում են անտառային հողերի և անտառածածկ տարածքների ելակետային տվյալները, որոնց հիմքի վրա պետք է մինչև 2050 թ. ավելանան անտառածածկ հողատարածքները:

«Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 22-ի թիվ 610-Լ որոշմամբ[5] ամրագրված է. «Անտառի նոր ազգային ծրագրի ընդունմամբ նախատեսվում է անտառածածկի ավելացում՝ Հայաստանի տարածքի 12.9% չափով մինչև 2030 թ.»: Այս փաստաթղթում ևս բացակայում են անտառային հողերի և անտառածածկ տարածքների ելակետային տվյալները, որոնց հիմքի վրա պետք է մինչև 2030 թ. ավելանան անտառածածկ հողատարածքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- *Եթե անգամ հաշվի առնենք առաջարկած մեթոդաբանությունը և օգտվենքմիայն Վիճակագրական կոմիտեի տվյալներից, ապա 1993-1994 թթ. տարեգրքում անտառածածկ տարածքների թիվը նշված է **334.1 հազար հա**, 2024 թ. տարեգրքում անտառային տարածքը նշված է **289.1 հազար հա**, **որի տարբերությունը կազմում է 45 000 հա, նույն թիվը, ինչ գրված է Զեկույցում:***
- Անտառածածկ հողերի վերաբերյալ տվյալները տարբեր պաշտոնական փաստաթղթերում տարբեր են, ինչը խոչընդոտում է համապատասխան վերլուծությունների իրականացմանը: (Անտառածածկ տարածքները, ըստ Վիճակագրական կոմիտեի, **2023 թ-ին կազմել են 289,100.0 հա**, նույն թիվն է www.e-draft.am կայքում 2023 թ. հրապարակված՝ «Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման մասին» որոշման նախագծում[6], ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում Ծառածածկ տարածքների դասում անտառային ծառածածկ հողերի մակերեսը կազմում է **289,081.68 հա**: Մինչդեռ Շրջակա միջավայրի նախարարության տվյալներով՝ **2023 թ-ին անտառածածկը նշվել է 282,633.50 հա**):

[4] https://armstat.am/file/doc/99552323.pdf
[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=151985
[6] https://www.e-draft.am/projects/6427/about

- Անտառածածկը պետք է ավելացվի հիմնականում անտառային հողերում, այնպես որ անտառային հողերի մակերեսների վերլուծության ներառումը Զեկույցում հիմնավորված է։
- Անհրաժեշտ է ՀՀ անտառի գույքագրում (անտառածածկ տարածքներ՝ ներառյալ բնության հատուկ պահպանվող տարածքների անտառածածկ տարածքներ, անտառային հողեր, անտառային ֆոնդ), համապատասխան տվյալների շտեմարանների ստեղծում՝ անտառի վիճակի իրական պատկերը հասկանալու և համապատասխան թիրախներ սահմանելու համար։
- Անհրաժեշտ է պաշտոնական, հանրության համար հասանելի, ընդունված ստանդարտներով և մեթոդաբանությամբ հավաքագրված հավաստի տեղեկատվություն, թե, արդյոք, 1993 թ. (1993 թ. անտառի ցուցանիշը բոլոր հետագա կլիմայական փաստաթղթերի հիմքն է) հաշվառման արդյունքում անտառային հողերի և անտառածածկ տարածքների ցուցանիշներում ներառված են բնության հատուկ պահպանվող տարածքների տվյալները, թե ոչ։